



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԵՎԻԿԱ» ԿՈՄՊԵՆԻՅԱՆ
ԵՆԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

« 20 » 11 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 106

Ձեռնարկողը՝

<<ՎԻԿԱՐՏ>> ՍՊԸ

<< Սյունիքի մարզ, ք. Կապան, Թումանյան 9/3

Գործունեությունը՝

Կապանի ավազազլաքարակոպճային խառնուրդի երևակումում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր

<< Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿի տնօրեն՝



Վ. Սահակյան

հեղեղումների ընթացքում ջրի հոսանքի նվազման շնորհիվ բերվածքներից առաջացնում է բեկորային ապարների կուտակումներ:

Հետախուզվող ավազակոպճագլաքարային կուտակը ներկայացված է Ողջի գետի ձախափնյա մասի ողողահունի ուղղությամբ ձգվող՝ 243 մ երկարությամբ և մինչև 28.8մ միջին լայնությամբ, հորիզոնական տեղադրվածությամբ շերտանման մարմնի տեսքով, որը հունով դեպի վեր աստիճանաբար սեպանում է: Աշխատանքների տեղամասը գետային ավազակոպճային բերվածքներով ներկայացված, գյուղատնտեսական նպատակներով անօգտագործելի, տարածք է՝ զուրկ ծառային բուսականությունից:

<<ՎԻԿԱՐՏ>> ՍՊ ընկերությունը Կապանի ավազակոպճագլաքարային երևակման երկրաբանական ուսումնասիրությունը նախատեսում է իրականացնել հետևյալ մեթոդաբանությամբ.

- տոպոհանույթ և երկրաբանական հանույթ՝ 0.7հա տարածքում,
- հետախուզահորերի անցում՝ 60մ³ ծավալով,
- փորվածքների փաստագրում, նմուշարկում,
- փորձնական հանույթ՝ 300մ³ ծավալով,
- ռադիոչափական, ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ,
- հետախուզված պաշարների արդյունաբերական նշանակության գնահատում:

Հաշվի առնելով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել միմյանցից 13.5-101.5մ հեռավորությամբ տեղադրվող՝ մինչև 5.0 մ խորությամբ, 1.5 մ² կտրվածքով 8 հետախուզահորերի միջոցով: Ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական C₁ կարգով: Նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման արդյունքում օգտակար հանածոյի արդյունաբերական կարգով սպասվելիք պաշարները կկազմեն մոտ 31.5 հազ. մ³:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է տրամադրվող տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ: Երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի 0.5կմ:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում, որոնք նախատեսված են մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում: Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հետախուզահորերից վերցնել նմուշներ, այդ թվում՝ 8 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգոպետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.3 x 0.1մ չափերով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 30 կգ-ի:

Ավազակոպճային խառնուրդի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է հետազոտվող երևակման տարածքից կատարել փորձնական հանույթ՝ մոտ 300 մ³ ծավալով: Նշված մեծածավալ տեխնոլոգիական նմուշը կենթարկվի վերամշակման պատվիրատուի ջարդիչ-տեսակավորման արտադրամասում, որի ընթացքում կմշակվի ավազակոպճագլաքարային խառնուրդի հարստացման տեխնոլոգիան, կճշտվի ԱԿԽ-ի գրանուլոմետրիական կազմը:

Երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզահորերը ենթակա են լցման, որը նախատեսվում է իրականացնել ձեռքով: Լցման աշխատանքների

ընդհանուր ծավալը կկազմի 60մ³: Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում: Նախատեսվում է նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսում են նաև ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որոնք կիրականացվեն հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով: Հայտում ներկայացվել է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, ջուր, հող, կենսաբազմազանություն/ պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները, այդ թվում՝

- հանքերակման տարածքներում և ավտոճանապարհների մակերեսներին մթնոլորտային օդի որակի և Ողջի գետի ջրի որակի պարբերաբար դիտարկումներ
- փոշեգոյացման կանխման նպատակով արտադրական գոտիներում (փորձնական հանույթի բացահանքի սահմաններում) ջրցանում:
- կիրառվող հանքային տեխնիկայի և սարքավորումների տեխնիկական վիճակի կարգավորում, արտանետման խողովակի վրա զտիչների տեղադրում /ծխագազերի նորմատիվային արտանետումների գերազանցումները կանխելու նպատակով/:

Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում չի նախատեսվում քիմիկատների օգտագործում և վտանգավոր արտահոսքեր չեն առաջանա, անձրևաջրերը և ձյան հոսքերը տարածքից կհեռանան բնական առվակների միջոցով: Տեխնիկական նպատակով ջրօգտագործումը կիրականացվի ջրատար մեքենայով, իսկ որպես խմելու ջուր նախատեսվում է օգտագործել շշալցրած ջրերը:

Ռեկուլտիվացիոն աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետախուզական աշխատանքների ավարտից հետո: Հողաբուսական շերտի պահպանության նպատակով նախատեսվում է նախագծված հետախուզափորվածքների (հետախուզահոր, փորձնական հանույթի բացահանք) անցման ժամանակ տարածքում առկա հողի վերին շերտը հանել և պահեստավորել, երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո օգտագործել ռեկուլտիվացիոն աշխատանքներում՝ խախտված տարածքների և բնական լանդշաֆտի վերականգնման համար: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար <<ՎԻԿԱՐՏ>> ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 50 000 ՀՀ դրամ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում <<ՎԻԿԱՐՏ>> ՍՊ ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների /օդ, ջուր, հող/ որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ՝ տարին 2 անգամ պարբերականությամբ: Մշտադիտարկումների պլանում նախատեսված գործողությունների ծախսերը նախնական գնահատվել են 250 հազար դրամ:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում << օրենսդրությամբ սահմանված կարգով 01.10.2017թ. << Սյունիքի մարզի Կապան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ: Քննարկումների ժամանակ նախատեսվող գործունեությունը արժանացել է հավանության:

Եզրահանգում. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների փոքր ծավալների պատճառով շրջակա միջավայրի վրա ազդեցությունները բնապահպանական տեսանկյունից կլինեն ոչ զգալի, կկրեն ժամանակավոր և տեղային բնույթ: Հայտում ներկայացված բնապահպանական ազդեցությունների մեղմացման միջոցառումների ապահովման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը

օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի պահանջներով և "Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի եվ անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին" ՀՀ կառավարության 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն որոշման պահանջներով:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է՝ պահպանել հայտում առաջարկված՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա /ջուր, մթնոլորտային օդ, հող, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր/ բացասական ազդեցությունները կանխարգելող և մեղմացնող միջոցառումների և մշտադիտարկման (մոնիտորինգի) պլանում ներառված հողի, ջրի, օդի որակի վերահսկման աշխատանքների իրականացումը:

3. Աշխատանքների իրականացման համար ջրօգտագործումը և շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՎԻԿԱՐՏ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակումում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Հ. Մկրտչյան